ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 39

«18» 04 2018 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջի կատարումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի ապրիլի 18 - ի
թիվ «39» հրամանի

ԿԱՐԳ

ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի **(այսուհետ՝ գլխավոր դատախազ)** տեղակալի թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթի **(այսուհետ՝ մրցույթ)** կազմակերպման և անցկացման կարգը:

2. Մրցույթ անցկացվում է այն դեպքում, եթե գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուի պաշտոնում «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ՝ օրենք)** 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով գլխավոր դատախազի տեղակալ չի նշանակվել:

3. Յուրաքանչյուր հավակնորդի համար երաշխավորվում է մրցույթին մասնակցելու մատչելիությունն ու հավասար պայմանները:

4. Մրցույթ անցկացվում է նաև այն դեպքում, եթե մրցույթին մասնակցելու համար դիմել է մեկ մասնակից:

5. Մրցույթն անցկացնում է գլխավոր դատախազին առընթեր որակավորման հանձնաժողովը **(այսուհետ՝ հանձնաժողով)**:

6. Մրցույթի անցկացման գործընթացը կարգավորվում է օրենքին, սույն կարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

7. Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով գլխավոր դատախազի տեղակալ չնշանակվելու դեպքում անցկացվում է մրցույթ, ինչի մասին հանձնաժողովը, գլխավոր դատախազի տեղակալի թափուր պաշտոն առաջանալու պահից յոթնօրյա ժամկետում, հրապարակում է հայտարարություն **(այսուհետ՝ հայտարարություն)**:

8. Հայտարարությունը հրապարակվում է մրցույթն անցկացնելու օրվանից առնվազն մեկ ամիս առաջ՝ 3000 տպաքանակ ունեցող մամուլում, Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և դատախազության կայքէջում:

9. Հայտարարությունը պարունակում է հետևյալ տվյալները՝

1) համապատասխան մարմնի և թափուր պաշտոնի անվանումը,

2) հայտերի ընդունման ժամկետը, վայրը,

3) անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,

4) մրցույթի անցկացման օրը, վայրը և ժամը,

5) մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնողի գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

10. Հայտերի ընդունման ժամկետը ոչ պակաս, քան մեկ շաբաթ, և ոչ ավելի, քան մեկ ամիս է:

III. ՄՐՑՈՒՅԹԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

11. Մրցույթին մասնակցելու համար դիմած անձը **(այսուհետ՝ դիմումատու)** Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժին **(այսուհետ՝ անձնակազմի կառավարման բաժին)** ներկայացնում է՝

1) հանձնաժողովի նախագահին հասցեագրած դիմում.

2) բարձրագույն իրավաբանական կրթությունը և յոթ տարվա մասնագիտական փորձառության առկայությունը հավաստող փաստաթուղթ,

3) դատախազի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների բացակայության մասին կառավարության սահմանած կարգով տրված փաստաթուղթ,

4) պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու կամ օրենքով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ (եթե արական սեռի հավակնորդ է),

5) հավակնորդի կենսագրական տվյալները պարունակող քարտ՝ իր կողմից իրավաբանի կոչում ձեռք բերելուց հետո իրականացված մասնագիտական իրավաբանական գործունեության նկարագրությամբ՝ կցելով համապատասխան փաստաթղթեր (այդ թվում՝ պաշտոնի անձնագիր կամ այլ փաստաթղթեր, որոնք հավաստում են մասնագիտական իրավաբանական ստաժ դիտարկվող աշխատանքում աշխատանքային պարտականությունները),

6) անձը հաստատող փաստաթուղթ,

7) իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճանի առկայությունը հավաստող փաստաթուղթ (եթե հավակնորդը իրավաբանական գիտությունների թեկնածու կամ դոկտոր է), իսկ օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դեպքում՝ նաև գիտական գործունեության առնվազն չորս տարվա ստաժի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

12. Մրցույթին մասնակցելու հավակնություն ունեցող անձը կարող է ներկայացնել երաշխավորագրեր, ցանկացած այլ փաստաթուղթ, ինչը, իր կարծիքով, կարող է նշանակություն ունենալ ընտրության գործընթացում:

13. Դիմումատուն փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

14. Դիմումատուն մրցույթից առնվազն մեկ օր առաջ կարող է գրավոր հրաժարվել մրցույթին մասնակցելուց:

15. Անձնակազմի կառավարման բաժինը յուրաքանչյուր դիմումատուի (բացառությամբ մրցույթին մասնակցելուց հրաժարվածների) ներկայացրած փաստաթղթերի փաթեթը տրամադրվում է հանձնաժողովին:

16. Սույն կարգի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերը թերի լինելու դեպքում այդ մասին դիմումատուին տեղեկացվում է նույն պահին, իսկ դրա անհնարինության դեպքում՝ եռօրյա ժամկետում: Թերությունները կարող են վերացվել հայտերի ընդունման համար սահմանված ժամկետի ընթացքում:

17. Փաստաթղթային տվյալների անհամապատասխանության դեպքում, կամ երբ առկա է գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող հանգամանք, հանձնաժողովը կայացնում է հայտի ընդունումը մերժելու մասին պատճառաբանված որոշում, ինչը նույն օրն ուղարկվում է համապատասխան մասնակցին:

18. Հայտի ընդունումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ մերժումը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Բողոքարկումը չի կասեցնում հայտերի ընդունման և գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուների ցուցակի կազմման գործընթացը:

19. Հայտի ընդունման մերժումը դատարանի կողմից անօրինական ճանաչվելու դեպքում դիմումատուի հայտը ենթակա է քննարկման որակավորման հանձնաժողովի կողմից, իսկ եթե մրցույթի անցկացումն սկսվել է, ապա դիմումատուն իրավունք ունի առանց նոր հայտ ներկայացնելու մասնակցելու այդ մրցույթին, իսկ եթե մրցույթն ավարտվել է, ապա արտահերթ մրցույթին:

20. Հայտերը ներկայացնելու համար սահմանված ժամկետի խախտմամբ կամ օրենքով նախատեսված պահանջները չբավարարող հայտերի ընդունումը մերժվում է և դրանք հանձնաժողովի կողմից ենթակա են վերադարձման՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

IV. ՄՐՑՈՒՅԹԸ

21. Մրցույթն անցկացվում է հայտարարության մեջ նշված օրը, ժամին և վայրում:

22. Հանձնաժողովի նախագահը, մինչև մրցույթը սկսելը, լուծում է հանձնաժողովի իրավազորության հարցը՝ ստուգելով հանձնաժողովի անդամների ներկայությունը:

23. Յուրաքանչյուր թեկնածուի հետ հարցազրույցն անցկացվում է առանձին:

24. Մրցույթն անցկացվում է օրենքի 36-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված հարցազրույցի միջոցով՝ հետևյալ երեք փուլով՝

1) յուրաքանչյուր թեկնածուի փաստաթղթերի և մասնագիտական փորձառության ուսումնասիրություն: Թեկնածուն իրավունք ունի պարզաբանումներ տալու իր փաստաթղթերում պարունակվող տեղեկությունների վերաբերյալ, իսկ որակավորման հանձնաժողովի անդամները կարող են հարցեր տալ թեկնածուին՝ նրա մասնագիտական

փորձառությունը, աշխատանքային ձեռքբերումները, գիտական հետաքրքրությունները, տվյալ պաշտոնում նրա մոտիվացիան, ակնկալիքները և այդ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական որակները և արժանիքները գնահատելու համար.

2) դատախազի վարքագծի կանոններին և ղեկավարման ու կառավարչական հմտություններին վերաբերող իրավիճակի ներկայացմամբ թեկնածուի կողմից իրականացվող վերլուծություն և դիրքորոշման ներկայացում՝ դատախազի վարքագծի կանոնների և տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ ղեկավարման և կառավարչական հմտությունների տիրապետման, ինչպես նաև տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական հատկանիշները գնահատելու համար (ինքնատիրապետում, վարվեցողություն, ունկնդրելու կարողություն, հաղորդակցման հմտություններ պաշտոնական և արտապաշտոնական հարաբերություններում, վերլուծական կարողություններ և այլն),

3) համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի նորմի, դատական ակտում արտահայտված դիրքորոշումներ և այլն) թեկնածուի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները գնահատելու համար: Թեկնածուին տրվող հարցերը չպետք է ունենան նրա իրավաբանական գիտելիքները ստուգելու նպատակ:

25. Հարցազրույցի ընթացքում դիմումատուներին ներկայացված իրավիճակներն ու իրավական լուծում պահանջող հարցադրումները պետք է լինեն հավասար բարդության, հստակ և հասկանալի, իսկ 3-րդ փուլում առաջադրված իրավական հարցի վերաբերյալ պետք է առկա լինի հստակ կարգավորում, որի վերաբերյալ դիմումատուն պետք է ներկայացնի իր հիմնավոր և պատճառաբանված դիրքորոշումը, այդ հարցի վերաբերյալ իրավունքի զարգացման հնարավորությունները: Տվյալ առաջադրանքի համար տրամադրված ժամանակը չպետք է գերազանցի 30 րոպեն:

26. Հարցազրույցի յուրաքանչյուր փուլում հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ հավակնորդին կարող է տալ առավելագույնը երեք հարց, որոնց պատասխանելու համար (բացառությամբ երրորդ փուլում առաջադրված իրավական հարցի վերաբերյալ դիրքորոշում հայտնելու դեպքի) լրացուցիչ ժամանակ չի տրվում:

27. Հարցազրույցի ընթացքում դիմումատուներին ներկայացված իրավիճակային հարցերի ու իրավական լուծում պահանջող առաջադրանքների ընտրությունը կատարվում է վիճակահանությամբ:

28. Յուրաքանչյուր դեպքում հարցերն ու առաջադրանքները կազմում է հանձնաժողովը և հաստատում գլխավոր դատախազը:

29. Յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցը ձայնագրվում և գրավոր արձանագրվում է: Հարցազրույցի ձայնագրությունը կցվում է արձանագրությանը:

30. Հարցազրույցի ձայնագրությունն ու գրավոր արձանագրությունն ունեն միևնույն իրավական ուժը, սակայն, եթե ձայնագրությունը պատշաճ որակի չէ կամ տեխնիկական այլ խնդիրների պատճառով հնարավոր չէ այն վերարտադրել, ապա հիմք է ընդունվում գրավոր արձանագրությունը:

31. Արձանագրության տակ ստորագրում են հանձնաժողովի նախագահը, անդամները, քարտուղարը:

32. Մասնակցի հետ հարցազրույցն ավարտելուց անմիջապես հետո հանձնաժողովը տվյալ մասնակցի համար անցկացնում է գաղտնի քվեարկություն:

33. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկում է կողմ կամ դեմ:

34. Հարցազրույցի արդյունքում գլխավոր դատախազի տեղակալի թեկնածուն ընտրվում է հանձնաժողովի կողմից գաղտնի քվեարկությամբ, որակավորման հանձնաժողովի անդամների առնվազն 6 ձայնով ընդունված որոշմամբ:

35. Քվեարկության արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի կողմից, ինչի մասին կազմվում է արձանագրություն:

36. Մրցույթի արդյունքները հրապարակվում են մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը, անհնարինության դեպքում՝ հաջորդ օրը:

37. Քվեարկելուց հետո մասնակիցները հրավիրվում են հարցազրույցի անցկացման սենյակ, որտեղ հանձնաժողովի նախագահը բարձրաձայն ընթերցում է հարցազրույցի ընթացքում կազմված արձանագրությունը, հայտարարում է մասնակցի ազգանունը, անունը, հայրանունը, ինչպես նաև «կողմ» կամ «դեմ» ձայների քանակը:

38. Մրցույթի արդյունքների հրապարակումից անմիջապես հետո՝ ոչ ուշ, քան հաջորդ օրը, ընտրված թեկնածուների վերաբերյալ հանձնաժողովի կազմած եզրակացությունը ներկայացվում է գլխավոր դատախազին:

V. ՆՈՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

39. Նոր մրցույթ հայտարարվում է, եթե՝

1) չի ներկայացվել մրցույթին մասնակցելու հայտ կամ հայտ ներկայացրած անձանցից ոչ մեկը չի ներկայացել մրցույթին.

2) մասնակիցներից ոչ մեկը գաղտնի քվեարկության արդյունքում չի հավաքում ձայների անհրաժեշտ քանակը և հանձնաժողովը չի ընտրում գլխավոր դատախազի տեղակալի թեկնածու.

3) գլխավոր դատախազը հանձնաժողովի կողմից ընտրված թեկնածուների թվից գլխավոր դատախազի տեղակալ չի նշանակել:

40. Հանձնաժողովը նոր մրցույթ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակում է սույն կարգի 40-րդ կետում նշված որևէ հիմքի ի հայտ գալու օրվան հաջորդող 7 օրվա ընթացքում:

41. Նոր մրցույթն անցկացվում է սույն կարգին համապատասխան:

VI. ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

42. Եզրակացությունը ստանալուց հետո, բողոքարկման բացակայության դեպքում, երեք աշխատանքային օրվա ընթացքում գլխավոր դատախազը մրցույթի արդյունքում ընտրված թեկնածուներից մեկին կարող է նշանակել գլխավոր դատախազի տեղակալի պաշտոնում:

43. Բողոքարկման դեպքում համապատասխան պաշտոնում նշանակումը կատարվում է բողոքարկման արդյունքներով վերջնական որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

44. Հանձնաժողովի որոշմամբ մրցույթին ներկա գտնվելու իրավունք ունեն մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչներ, ինչպես նաև հրավիրված դիտորդներ:

45. Մրցույթի արդյունքները հրապարակվում են դատախազության կայքէջում՝ մրցույթն անցկացնելուց հետո՝ նույն օրը: